

ՆԱՄԱԿՆԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ե.

Ազատ դատախարակութեան մասին

Սիրելի Սարգիս,

Ներքո՞ որ քո վերջին նամակներին իր ժամանակին չեմ պատասխանել:

Մէկէն ի մէկ քո հարցերին չեմ կարող պատասխանել, այլ խոստանում եմ հետզհետէ գրել քեզ և ուժերս ներածի չափ բացատրել ու պարզաբանել քեզ զբաղեցնող խնդիրները:

Քո նամակներից մէկում դու խորհուրդ ես հացնում, թէ ինչպէս վարուես: որ աշակերտներդ ինքնուրոյնութեան ընտանան և երբ դպրոցից գուրս դան, կարողանան անկախ մտածողներ լինել և աւելացնում ես, որ կարգալով Վենացիի աշխատութիւնը «Ի՞նչպէս օտնդծել ազատ ուսումնարան» և «Մանկան ազատութիւնը» վերնագրով գիրքը, խիտ հաւանել ես և մտածում ես դպրոցիդ մէջ գործադրել:

Հէնց այդ մասին էլ ես կգրեմ քեզ իբրև հրատապ խնդիրներից մէկը, որ զբաղեցնումէ ոչ միայն քեզ, այլ ընդարձակ ծաւալ է ստացել Ռուսաստանի մանկավարժների շրջանում:

Ազատ դատախարակութեան սկզբունքը նոր չէ. նա սկիզբ է առել 18-րդ դարու երկրորդ կիսից, երբ հրատարակուեց ժ. Ժ. Բուսսօի էմիլը, որ ապա Պետալոցցիին անիթ սուեց յնդաշրջումն առաջ բերել մինչ այն գոյութիւն ունեցող ուսուցման եղանակի մէջ:

Արևմտեան եւրոպայում մանկավարժական աշխարհում մեծ փոփոխութիւններ տեղի ունեցան և հայկացիների տարբեր ուղղութիւններ առաջ եկան հոգեբանական գիտութիւնների դարգացման շնորհիւ: Այս ուղղութիւններից մէկն էր նաև մանկանը երբէք չկաշկանդել որ և է կանոններով և հարկադրական միջոցներով, այլ ազատ թողնել իր կամքին աճելու և զօրանալու: Գաստարակ ուսուցչի պարտականութիւնն է ուսուցանել այն չափով, որ չափով որ մանուկը կկամենայ սովորել և այնքան ժամանակ, որքան ժամանակ նա կկամենայ լսել:

Ազատ դատախարակութեան գաղափարը Ռուսաստանում առաջին անգամ գործադրուեց 60-ական թուականներում իբրև փորձ կոոն Տօլստոյի ձեռքով իր «Ясная поляна» կալուածում: Երկար ժամանակ դա եղակի դէպք էր ամբողջ Ռուսաստանում, բայց

վերջին մի քանի տարում կարծես ծաւալ է ստանում և այլ տեղերում, ու շատ բնական է, որ այդ գաղափարներով հետաքրքրուեն և մեր ուսուցիչները, թէև դու առաջինն ևս, որ քո կարգացած գրքերի ազդեցութեան տակ կամենում ևս փորձ անել, բայց հաւատում եմ, որ ուրիշներն էլ կարող են նոյն գաղափարի կողմնակից լինել և աչքի առաջ ունենալով, որ մենք աստատարակ սիրում ենք նորութիւններ, աշխարհ դարմացնելու համար, որ այն, ինչ որ քաղաքայիլիթ երկրներում դանդաղութեամբ, դուշութեամբ է ընդունում մենք իսկոյն, առանց երկար ու բարակ մտածելու ուզում ենք գործադրել և չկամենալով որ քո անփորձութեամբ լաւի հետամուտ լինելու անհշով միջակն էլ ձեռիցդ բաց թողնես, ևս մի քիչ երկար կանգ կանեն և ազատ դաստիարակութեան այն թերութիւնների վրա, որ դու Ահնայելի գրքերում չես հանդիպել:

Արդ, ինչու մն ևն կայանում ազատ դաստիարակութեան գաղափարի հիմունքները:

Բոլոր ազատ դաստիարակութեան կողմնակիցները Բուսսոնի սկսած պնդում են, որ մանուկը ծնւում է դրական հակումներով, նրանք ասում են. «Առողջ մանուկը ծնւում է կատարելապէս բաւականութիւն տալով այն պահանջներին, որ կայ ճշմարտի, զեղեցիկի և բարւոյ վերաբերեալ ներդաշնակութեան մէջ: Ուսուցանել և դաստիարակել երեխային անկարելի է և ի դուր է, այն պարզ պատճառով, որ մանուկը մօտ կանգնած լինելով շափահասին, ստաներդաշնակութեան, ճշմարտութեան, զեղեցիկի և բարւոյ գաղափարին բարձրացնել է կամենում երեխային իր փառքի համար: Այս իդէալի գիտակցութիւնը նրա մէջ աւելի զօրեղ է, քան մեծերի մէջ: Մանուկը ունի մութ, բայց ուղիղ պատկերացում այս կեանքի նպատակի մասին, որ նա տեսնում է այն բաղդաւորութեան մէջ, որ մարդկանց հետ սիրալիր յարաբերութիւն ունելով կարող է հասնել»:

Թէ մանուկները ծնւում են դրական հակումներով, այդ մասին, դեռ երրորդ դարու սկզբներում ասել է Տերտուլեանը. «Մարդու հոգին ի բնէ քրիստոնեայ է», այսինքն մարդասիրական է, ևսական են գործնում սովորաբար դաստիարակութեան սխալ ուղղութիւնն ու հասարակութիւնն, որ յազեցած է նեղ ևսականութեամբ:

Եթէ ճիշտ է, որ երեխաները կատարեալ են ծնւում, եթէ ընդունենք, որ երեխաները վատ հակումներն ու երեոյթները իւրացնում են միմիայն մեծերի և միջավայրի ազդեցութեան տակ, եթէ մեծերը չեն կարող դաստիարակել երեխային, որը իր բարոյական յատկութիւններով շատ բարձր է կանգնած նրանցից, ապա բնական հետեւողութիւն կլինի ասել, թողէք երեխաներին անկախ

զարգանալ և մի փչացրելք նրանց ձեր միջամտութեամբ, թող նրանք սովորեն այն և այնպէս, ինչպէս իրանք կկամենան, թող նրանք իրար հետ ետլայ գնան, ինչպէս կարող են, թող նրանք ամեն տեսակ կարգեր մտցնեն, ինչ որ հարկաւոր կհամարեն: Գաստիարակի գործը միայն այն է, որ հնարաւորութիւն տայ երեխաներին աշխատել և պատասխանել մանուկների հարցերին, ինչոր սրանք կբարեհաճեն հարցնել:

Այսպէս են ասում ազատ դաստիարակութեան կողմնակիցները, զրանց թւում և վեհացելը, որի գրքերը քեզ շատ դուր են եկել:

Ուրեմն եթէ այս բոլորն այսպէս է, ապա դաստիարակութեան և ուսուցման ժամանակ չպիտի լինի որ և է հարկազրանք, պատիժ, որոշ կարգեր և պահանջներ և որպէս զի երեխաները մանկավարժների ցանցի մէջ չընկնեն, որ կկամենայ նրանց տանել իր ցանկալի ճանապարհով, չպէտքէ գոյութիւն ունենայ ապագայ դպրոցում, ինչպէս վեհացելն է ասում «Ազատ երեխայի տան մէջ, չպէտքէ տեղի ունենայ նախապէս սահմանած որեէ ծրագիր կամ ուսումնարանական զրազմունքների սահմաններ, չպէտքէ լինեն նախապէս նշանակուած դասարաններ, և ոչ իսկ առաջուց հրաւիրուած ուսուցչական խումբ և ճշմարիտ, իսկական, իրապէս ազատ դպրոցը պէտքէ այդպէս լինի. լինի դպրոց առանց ծրագրի, առանց դասարանների և առանց ուսուցիչների» 1)

Ահա այն սկզբունքները, որ քարոզում են, «ազատ դաստիարակութեան» կողմնակիցները և որը դու կամենում ես քո դպրոցում գործադրել:

Ես այժմ կաշխատեմ այդ սկզբունքները քննադատել և պարզել այն գաղափարը, թէ այդ սկզբունքներից որը, ինչ պայմաններում կարելի է գործադրել և ինչու, ինչ բաներ իբրև ուսուցչական գաղափարներ անհնարին է գործադրել մեր կեանքի մէջ, հետեաքար և պիտի գուրս նետել դաստիարակչական շրջանից: Այլապէս, սիրելիս, առանց այն էլ մեր անկերպարան դպրոցների մէջ աւելացրած կը լինենք միայն քառոր, առանց օգտակար հետեանքի հասնելու, որը քո բուն ցանկութիւնն է:

Ամենից առաջ պէտք է այս հարցին պատասխանել, թէ յիշուած երեխաները ծնւում են զրական հակումներով իբրև կատարեալ արարածներ, որոնց մենք մեր միջամտութեամբ կարող ենք միայն փչացնել: Ես Տերտուլեանի գաղափարակիցների շատ զբոսածներն եմ կարգացել, հետամուտ եմ եղել գտնելու նրանց գրուածներում այն փաստերը, որոնք ինձ համոզելին, որ երեխա-

1) Վեհացել «Ինչպէս ստեղծել ազատ դպրոց» եր. 7.

ները կատարեալ են ծնում, բայց այդպիսի վաստերի փոխարէն հանդիպել եմ լսկ խօսքերի նրանք հուշատում են, որ նորածնի անդիտակից գանդի մէջ չի կարող յանցանքներ և բացասական յատկութիւններ լինել և ծանօթ լինելով շրջապատող միջավայրի ապականութիւններին, բնական հետեոզականութեամբ ասում են. մենք մեծերս ենք պատուաստում երեխաների մէջ մեր բացասական յատկութիւնները: Չժխտելով մեր մեծերիս ահագին ազդեցութիւնն մանկան վրայ տեսնենք, որքան իրաւացի է մանկան կատարեալ ծնուիլը:

Դրա համար պէտք է լսենք նրանց, որոնք երեխաների հետ գործ են ունեցել և միջոց են ունեցել դիտելու նրանց բոլոր արարքները:

Ամեն մէկը, ով երկար ժամանակ խնամել է երեխաներին, ով օրերով երեխաների հետ է անցկացրել իր ժամանակը, նոյն իսկ սիրազեղ հարազատ մայրը կասի, որ երեխայի մէջ զբաղան հակումների հետ միասին քիչ չեն և բացասական յատկութիւններ: Երբեմն երեխան իր արարքներով յիշեցնում է վայրի գազանի ձագին:

Ամեն մի ընտանիքի աէր և ընտանիքում մեծացած անձն գիտէ, որ երեխան առաջին տարիներում ճանաչում է միայն իրան, իր պահանջներն ու ցանկութիւնները: Բացի իր «Եսից» նա ուրիշ բան չգիտէ: Երեխայի եսականութեան պէս եսականութիւն չափահասների մէջ շատ հազուադէպ է:

Հարցրէք փոքրիկ երեխաների խնամածուներից և նրանք կասեն ձեզ, որ «Ես կամենում եմ»-ը երեխայի ամենամեծ հիմքն է, երբ խօսքը իր շահերին է վերաբերում, իսկ չնչին է, երբ ուրիշի շահին է վերաբերում: Նոյնպէս երեխաների մէջ մենք հանդիպում ենք այլ բացասական յատկութիւնների—խաբեքայութեան, կոպտութեան, բարկացկոտութեան ևլն:

Տես՝ թէ երեխաները ինչ մեծ բաւականութեամբ տանջում են կենդանիներին և իրանցից թոյլ եղբայրներին ու քոյրերին:

Տես, թէ ինչ ախորժակով ամենափոքրիկ երեխաներն անգամ ընթացք են տալիս իրանց բռունցքին, օտերին, ատամներին ամենափոքրիկ ընդդիմութեան ժամանակ:

Մեր դիտողութիւնները բաւական չհամարելով տեսնենք ինչ են ասում հոգեբանները այդ առթիւ:

Սիօլլին իր անձնական դիտողութիւնների, մայրերի ցուցումների և զբաղան ժողովածուների հիման վրայ եղբակացնում է, որ մանկան բնաւորութեան մէջ կան բացասական դժեր. նա ասում է. «Մարդկային կեանքի առաջին տարիների հետ ամենաթոյլ ծանօթութիւնն անգամ մեզ ցոյց է տալիս, որ փոքրիկ երեխաները

շատ նմանութիւն ունեն ստորին կենդանիների հետ: Նրանց բնորոշ ցանկութիւնն ու ձգտումն կենդրոնացած է իրանց «կտի» և նրան գոհացումն տալու վրա:

«Օրինակ ինչ աւելի ակնյայտնի հակումն արտայայտում է երեխայի մէջ, քան այն, որ նա անսահման ազան է և վերին աստիճանի ցանկանում է իւրացնել և օգտուել այն բոլորից, որ գտնուում է իր առաջ և չի ցանկանում, որ ուրիշն էլ օգտուի նոյն առարկայից»:

«Մեր հետախուզութիւնները մեզ բերում են այն անհրաժեշտ համոզման, ասում է Սեօլլին, որ կոպտութեան և կեղծիքի վերաբերութեամբ, երեխաները շատ հեռու են բարոյական կատարելութիւնից: Մենք զիտել ենք, որ նրանց մէջ կան հակումներ, որ եթէ չհանդիպեն ընդդիմութեան կամ ուրիշները եթէ յետ չկանգնեցնեն, կարող են զարգանալ և դառնալ իսկական կոպտութիւն և կեղծիք»¹:

Ազատ դաստիարակութեան քարոյիշները չկարողանալով հերքել այս փաստերը, պնդում են, որ այս բացասական յատկութիւնները մանուկների մէջ բնածին չեն, այլ մեծերի օրինակի, շրջապատող կեանքի արդիւնք:

Բայց բանն այն է, սր վերոյիշեալ բացասական յատկութիւնները մանկան մէջ երևում են հէնց ծնուած օրից և այն շրջանում, երբ շրջապատող միջավայրը նրա վրա ազդեցութիւն անել չի կարող: Ահա քեզ օրինակ մի տարեկան երեխայ, որը տեսել է միայն փաղաքշանք ու սէր, բայց կատաղութեամբ խփում է իր մօրը, դոռում, լալիս միայն նրա համար, որ մայրը գուրգուրում է իր միւս փոքրիկին: Մի ուրիշ ընտանիքում երեք տարեկան երեխան խլում է իր քրոջ խաղալիքները և ուշադրութիւն չի դարձնում նրա լացուկոծին: Ս ամսական երեխան, որ դեռ ժամանակ չի ունեցել շրջապատողների հսականութիւնը իւրացնել, տիրաբար պահանջում է այն ամենը, ինչ որ տեսնում է, և բերանն է տանում՝ ինչ որ ձեռքն է ընկնում: Եւ այդպէս անում են ու պահանջում ոչ թէ հասարակ ընտանիքի կամ անկիրթ ծնողների զաւակները, այլ և բարձր շրջանի և ինտելլիգէնտ ընտանիքի զաւակները:

Դրական և բացասական տարբեր յատկութիւնների արտայայտութիւնը երևում է ամեն մի ընտանիքում և այդ պատճառով մանկան հսականութիւնը պէտք է համարել բնածին. եթէ այդպէս չլինէր, այն ժամանակ նորածինները պիտի անրիժ ու անարատ լինէին յանցանքի սաղմերից և հսականութիւնը երեան պիտի դար

1) Սեօլլի, Տեսութիւն մանկան հոգեբանութեան. եր. 298-99.

ապագայում հասակի հետ մեծանալով, Մինչդեռ մենք նկատում ենք զրա հակառակը:

Դու անշուշտ յիշում ես իմ քեզ դրած առաջին նամակը, ուր ես գրել էի եսականութեան մասին և բացատրել՝ թէ մարդիկ ինչ ճանապարհով հասել են զու պարտական ես՝ դադարաբեր թելադրող բարոյականին: Որպէս զի կրկնութիւն արած չլինեմ, խորհուրդ եմ տալիս կրկին աչքի անցկացնես առաջին նամակս¹⁾, ճիշտ նոյն երևոյթն է նկատում և մանկան մէջ՝ նախ երեխան միայն իր ետի գիտակցութիւնն ունի, ինչպէս որ էր նախնական մարդը, յետոյ միայն նա սկսում է գիտակցել և ուրիշի ետի հակացողութիւնն ունենալ, թէ և իր «ետի» գիտակցութիւնն այնքան զօրեղ է, որ ուրիշների մէջ նա ընդունում է միայն իր «ետին» բաւականութիւն տուող անհատներ: Միայն հետզհետէ, երբ իր ցանկութիւնները ընդհարում են ուրիշի ցանկութիւնների հետ — ծնողների, եղբայրների, քոյրերի, այն ժամանակ միայն նրա մէջ զարգանում է գիտակցութիւն, որ իրանից դուրս կան ուրիշների ցանկութիւններ և շահեր: Սակայն մինչև երեխան փորձով կհամոզուի, որ ուրիշների շահն ու ցանկութիւններն էլ հաշուի պիտի առնել, երկար ժամանակ է հարկաւոր: Անշուշտ այս բանում մեծապէս օգնում են նրան իր մեծ եղբայրներն ու քոյրերը:

Սիրոյ, համակրութեան իսկական զգացմունքը, իր շահերից հրաժարուելու պատրաստակամութիւնը յօգուտ ուրիշի երեան են գալիս մանկան մէջ յետոյ իբրև հետևանք համակցութեան, խաղերի, պաշտպանուելու կարիքի, իր մտքերն ու տպաւորութիւնները ուրիշների հետ բաժանելու ելն:

Եւ եթէ մենք դիտելու լինենք միջակ ընտանիքի պատկանող պատանիներին և մանկահասակներին, մենք առաջինների մէջ աւելի պարուխտական ձգտումներ, համեմատաբար աւելի անձնուրացութիւն, աւելի քիչ նախամարդկային բիրտ հակումներ կգտնենք, քան երկրորդների մէջ:

Ազատ գաստիարակութեան կողմնակիցները չափազանց բացասական վերաբերուելով դէպի իրական կեանքը, դէպի այն միջավայրը, ուր աճում, զօրանում է մանուկը և միևնոյն ժամանակ բացարձակ կատարելութիւն համարելով մանկան, պիտի ընդունէին գոնէ մանկան մէջ մի խոշոր թերութիւն, այն՝ որ նա չափազանց դիւրագգաց է վատը իւրացնելու. այլապէս անհասկանալի կլինէր, թէ ինչպէս երեխան դեռ օրօրոցից դուրս չեկած բացարձակ եսական է, դեռ հազիւ սովորել է թո՛թովել, արտայայտում է խանդատութիւն, բռնակալական ձգտում:

2) Տես Արարատ 1909 թ. Ապրիլ եր. 564-75.

Սակայն իրողութիւնն այն է, ինչպէս և Սեօլիին է ասում, որ այդ բացասական յատկութիւնները մանկան մէջ բնածին են:

Մի ուրիշ հանգամանք, եթէ մեծերի մեղքն է, որ կատարելութեամբ ծնուած մանուկներին փշագնում են իրանց վատ օրինակներով, ինչու ուրեմն չպիտի իրաւունք համարենք ասելու, որ երեխաների գրական կողմերի զարգացումն էլ լինում է շնորհիւ մեծերի ազդեցութեան: Հօ չի կարելի այնքան անտրամաբան լինել, որ ամեն մի պակասութեան համար մատնանշենք մեծերի վատ ազդեցութիւնը, իսկ գրական յատկութիւնների համար ասենք, ահա, տեսէք, երևիսան ի բնէ մեզնից բարձր է կանդնած:

Եթէ երեխայի մէջ կան գրական յատկութիւններ, պիտի ընդունենք, որ նրանք ազատ չեն և բացասական յատկութիւններէրից. թէև երկուսն էլ սաղմային գրութեան մէջ և մանկան մէջ երևան եկած այդ պակասութիւնները մեղ չպէտք է բերեն այն հզրակացութեան, թէ երևիսան յանցանքների մի բնակարան է, որին պիտի աճապարենք ազատել: Աճապարանքը չի օգնիլ. ամեն ինչ իր ժամանակն ունի, ժամանակի ընթացքում բարեյաջող պայմաններում փոքրիկ կատաղի եսականի մէջ կզարթնի մարդասիրական զգացումը և փոքրիկ զաժան դահճի մէջ՝ սիրոյ զգացումը:

Իբրև հետևողութիւն վերոյշեալ ասածներիս առաջ եմ բերում Սեօլիի խօսքերը. «Մի քանի աստուածաբաններ և այլ գիտնականներ պատկերացնում են երեխայի բարոյականութիւնը շատ մոայլ գոյներով... Միւս կողմից Բուսսօն և նրա հետևողները երևիսաներին դարձրել են բարոյական անարատութիւն . . . Երեխաների բարոյական գրութեան մասին հակասութիւններն ու նրա գնահատութիւնը արդիւնք է նախապաշարմունքիս Աստուածաբանից, որ պաշտպանում է բնածին ապականութիւնը և ամուրիից, որ երեխաներին ձանաչում է միայն իբրև տանջողներ, կարելի է սպասել, որ նրանք մանկութիւնը կնկարագրեն մութ գոյներով: Միւս կողմից, բանաստեղծը, գրաւուած մանկութեան գրաւութեամբ, հեշտութեամբ կարող է իղէալացնել նրա բարոյական կողմերը:

«Այդպիսի փորձերի ժամանակ մանկան բարոյական գնահատութիւնը մեզ կտանի սխալ հայեցակէտի: Երեխան բնականօրէն ընդունակ է զառնալ բարոյական կամ անբարոյական, բայց նա դեռ բարոյական արարած չէ և փորձել բռնի նրան դասել լաւ կամ վատ, մարուբ կամ փշայած շարքում, կլինի որոշ չափով հակասական»¹⁾:

Երևիսան իր մէջ կրում է մարդկային արժանիքների և պա-

1) Սեօլի. Տեսութիւն մանկան հոգեբանութեան, եր. 257-58.

Վաստեթիւնների սաղմը: Դաստիարակի դործն է օգնել հնարաւո-
քութեան չափով մի քանի յատկութիւններին փարթամ զարգա-
ցումն, միւսների նոր ձեւաւորումն, երրորդների չեղօքացումն:

Բայց յաջողութեան հասնելու համար խիստ շրջահայեաց պի-
տի լինել. մանուկներին իղէալացնելը կարող է մեզ միմիայն խան-
գարել դաստիարակութեան ուղիդ ճանապարհը գտնելու:

Աիրել մանկան նրա բոլոր պակասութիւններով հանդերձ,
աշխատել նրան օգտակար լինել, պարտաւոր է ամեն մի դաստիա-
րակ:

Ազատ դաստիարակութեան կողմնակիցները մէկ ծայրայե-
ղութիւնից բնկնում են միւս ծայրայեղութեան մէջ. միջնադա-
րեան մանկավարժները համարելով մանկանը փչացած բնաւորու-
թիւն, իրանց տեսակի միջոցներ էին ձեռք առնում դաստիարա-
կութեան համար. ներկայումս նորագոյն գաղափարի քարոզիչները
իղէալացնելով մանկան, ձեռքից վար են դնում վերջին երկու
դարում խնամքով մշակուած դաստիարակչական գէնքերը և կաս-
կածում են զրանց օգտակարութեան վրա:

Արդ, սիրելիս, այսքանից դու կմակարերես, որ դեռ վաղա-
ժամ է գործադրել Վենտցելի առաջարկած եղանակը քո դպրոցում:

Յաջորդ անգամ ևս կդրեմ ժամանակակից դաստիարակու-
թեան մասին:

Քո նախկին ուսուցիչ.

Յգրութիւն.

Չն Յունուարի

Ե Ր Կ Ո Ւ Ե Ղ Բ Ա Յ Ր

Դպրոցական Կեանքից (2. Էջերբախ)

(Вѣстникъ Воспитанія № 8)

II

Կենդանորֆը վերագարձաւ իր փոքր, երիտասարդական
ամուրիի բնակարանը, որ բաղկացած էր երկու սենեակից: Ճա-
շակով տապակած միսը, հեան էլ թունդ սուրճը նորան այն-
քան թարմացրին, որ նա զգալով իրան կազդուրուած, վերին
աստիճանի գոհ, նստաւ գաշնամուրի առաջ և սկսեց նուագել
«Մենդելսոնի» մարշը: